

Երկու հոգի տեղերնին հաստատուն կեցան երեք երկայն վայրկեան սպասելով որ հսկայաբերձ կենդանին աղէկ տեղը հասնի: Ութը քայլ հեռաւորութեամբ գազանը գլուխը վեր առաւ, դարձեալ մռնչեց և կուրծքը զարկաւ: Քաշելը պիտի շարունակէր երբ երկու հրացանները մէկէն պարպեցին, երբ րաց կապիկը, և բոլոր երկայնութեամբը երեսին վրայ գետին տապալեցաւ ու մեռաւ:

« Տեսայ, կը գրէ պատմաբանը, որ բռնել ուզած կենդանիս էր: Իմ հաւաքմունքիս մէջ ամենէն ծերն է և գրեթէ տեսածներուս մէջ ամենէն մեծը: Կամպոյ, թեպէտեւ երիտասարդ՝ բայց հին որսորդ էր, և քանի մը աւելի ուժով կորիլոններ ալ տեսեր էր, սակայն շատ քիչ: Հասակը հինգ ոտք և ինը բթաչափ էր, թեւերը երկնցուցած՝ ինը բթաչափ, և կուրծքը վաթսուռուերկու բթաչափ շրջապատ ունէր: Ձեռքերը որոնցմով սոսկալի գէնքերու նման մէկ հարուածով կը ջախջախէ զմարդ և կը խորտակէ անդամները, սաստիկ ջղային ոյժ մը ունէին և կը ճկէին բուն ճիրանանց պէս: Այսպիսի ջղային նեարդերով լեցուն թաթէ մը ելած հարուածին ծանրութիւնը կ'երևակայեմ թէ ինչ պիտի ըլլայ. միայն ոտքին բութ մատին շրջապատը վեց բթաչափէ նըռաղ չէր »:

Հետեւայլ գալ րերրով:

Տեղեկութիւնք քանի մը երաժշտաց վրայ.

Երաժշտութեան զուարճալի արհեստը որ մարդուս ականջն երկրիս վրայ կը զմայլեցնէ, անընդդիմակ ազդեցութեանց աղբիւր ըլլալէն դուրս, շատերուն բարոյականին և բնականին վրայ ալ զօրաւոր կերպով ներգործած է:

Սառուղ մեծ մաղձոտութենէ մը բռնուած ատենը Դաւթի տաւղին ներդաշնակութեամբքը կը հանդարտէր:

Հոմերոս կը պատմէ որ Ոդիսեոս կին ճէ մը խածուելով՝ ցաւը կը մեղմէր երաժշտութեամբ:

Ժե և ԺԶ դարուց մէջ սոսկալի հիւանդութիւն մը իյնալով Իտալիա՝ անհամար մարդիկ կը մեռնէին: Այս ցաւը զոր սխալմամբ փաղիժ ըսուած մամուլի մը խայթուածէն առաջ եկած կը համարէին, սաստիկ ուժահատութեան և ինչուան խենթութեան մէջ կը ձգէր խեղճ հիւանդները, որոնք շատ անգամ կը մտաբերէին յանձնապանութիւն: Իրենց միակ դեղ և դարմանն էր նուազարաններուն ձայնը, ու սրնգի կամ փողի հնչիւնը առնելուն պէս կարծես թէ անդամներն կը քակուէին, ամանաւ կաւ կը սկսէին պարել և յետոյ անոյշ քուն մը կ'ազատէր զիրենք թշուառ վախճանէ մը:

Միայն զգայուն և խոհուն արարածը չէ որուն վրայներգործէ երգոց յարմարութիւնը, հապա այլ և այլ անասուններ ալ երաժշտութենէ կը զգածուին, օրինակի համար ձիերը որ կը բորբոքին փողի ձայնն առնելով:

Պեռնառատէն տը Սէն Բիէռ կը պատմէ որ շատ անգամ՝ երաժշտութիւն եղող սենեկի մը անկիւնը՝ մէկ քանի մամուկներ կը ձգէին իրենց ուստայնը հագիլ թէ երգի ձայն կը լսէին, և դաշնակին քով կը կենային ինչուան որ երաժիշտը դադրէր գործիքին թելերը թրութուացընելէն:

Հրմ անգլիացին ալ ուղեց իմանալ դաշնակին ըրած ազդեցութիւնը առիւծին և փղին վրայ. կ'երևայ թէ սուր ձայները ախորժելի զգացմունք մը կուտային իրենց. բայց կատաղութիւններն կը բռնէր երբ որ կը լսէին հաստ ձայները:

Բարիզ եղած այլ և այլ փորձեր ալ նոյնպիսի արդիւնքներ առաջ բերած են, և ասկից կ'իմանանք որ միայն մարդըս չէ նուազարանաց քաղցրաձայնութենէն զմայլողը:

Երաժշտութիւնը միշտ իբրեւ հաճոյասէր արհեստ մը համարուած է, և ամենէն աւելի ճարտար երգահանները



մի և նոյն կերպով չեն զգար երաժշտական ներշնչումներ :

Կենսագիրները պահած են մեզի քանի մը նորօրինակ տեղեկութիւններ երաժիշտներու բնաւորութեանցը վրայ :

Ելիւք աղէկ մը ծծելու համար ներշնչման խանդը, ընդարձակ մարգագետին մը տանել կուտար իր նուագարանը, հոն ուրախութեամբ վայելով միայնութեան քաղցրութիւնը, բնութիւնը կը դիտէր. շնչած մաքուր օդը, թռչնոց ճռուողիւնը և բաց 'ի անկէ երբեմն նաև շամբաներու քանի մը շիշերը կ'ազդէին այս մեծահանճար մարդու երկուց իրիզեկներու և Որիէոսի պանչելի երգերը :

Ընդ հակառակն Չիմարոզա քաղաքներու շփոթութիւնը փնտռելով՝ իր Որատեանքը և Գաղունի աւուշուռքիւնը, որ մէյմէկ գլուխ գործոց են, յօրինեց տաքցած խօսակցութեան մը մէջ : Այս անուանի երաժիշտ, զոր Ռուսաստանի և Գերմանիոյ շատ իշխաններ և թագաւորները պատուեցին իրենց հրաւերներովը, օր մը Բրակայի շրջակայքը բարեկամներուն հետ պտըտելու ատենը գտաւ *Pria che spunti in ciel l'aurore* սիրուն երգը :

Շատ անգամ կը տեսնաս պզտիկ աղուոր կենդանիներ, որոնց խաղերը զուարճալի են որ և իցէ հասակ ունեցող մարդու, և թերևս մտքէդ չանցնիր որ Սաքքինի, Տուռանդէի աշակերտը որ արժանի եղաւ երաժշտութեան Ռասինն ըսուելու, կը սիրէր մասնաւոր կերպով պզտիկ կատուներու ընտանիք մը, և թէ իրենց շնորհալի շարժմանցը կ'ընծայէր իր իդիպուս 'ի Այլունին գեղեցիկ կտորները :

Սպիէրի նորօրինակ հնարք մը գտած էր երաժշտական երևակայութիւնը գրգռելու համար : Երեք բան իրեն հարկաւոր էին, չաքարապատ պտուղներու տուփ մը, կապար և տետր մը. արագաքայլ կ'անցնէր ամենէն աւելի բազմամարդ ճամբաներէն, և կը սկսէր փընտռել չէ թէ մարդ այլ երգի գաղափար մը, ու գտնալուն պէս թղթին վրայ

րայ կը նշանէր : Անշուշտ այս կերպով շարադրեց Դասնայեանքը :

Երևելին Հայտըն, որ Ռոհրան գեղին խեղճ սայլագործի մը որդին էր, և երիտասարդութիւնը աղքատութեան մէջ անցուցեր էր, Նեւտոնի նման ժուժկալ և սովաւապէտ, ունէր իրեն մէկ քանի սեփական սովորութիւնները. երբոր փափաք կ'ունենար երգ մը շարադրելու, մէկէն կ'ածիլուէր, մազերուն փոշի կը ցանէր և ճերմակեղէնները կը փոխէր : Յետ այսպէս սպրկիկ զարդարուելու, որ կարծես թէ Գերմանիոյ կայսեր դիմացը պիտի ելլար, մատը կ'անցընէր կայսեր իրեն տուած մատնին և սեղանի մը առջև կը նստէր, որուն վրայ թուղթ և գրիչ պատրաստ կը կենային. այս պատրաստութիւններէն ետքը ամբողջ ժամերու միջոց կը գրէր այն գեղեցիկ նուագները որոնց ոչ ոք կրցած է նմանիլ :

Ծինկարեկի կ'ախորժէր միտքը ամփոփել երաժշտական բան մը սկսելէն առաջ : Երբոր կը կարդար սուրբ գրքերէ կամ լատին հեղինակներէ մէկ քանի երես, միտքը կը վերանար բարձր գաւառներ և դիւրաւ կը շարադրէր ուղածը : Ասանկով գրեց քիչ ատենուան մէջ Պիւռուսը, Ռումկոյ և Ժիւլիէդը, և այլն :

Մոճարդ որ ամեն տեսակ երաժշտութիւն ալ մեծ կատարելութեամբ փորձած է, երգելիկէն սկսեալ ինչուան թատերերգութիւն, մահուրէն քանի մը տարի առաջ այսպէս կը գրէր բարեկամներէն մէկուն. « Երբ օրուան միջոց աղէկ կառքի մը մէջ կամ գիշերը խաղաղ ժամի մը ատեն ինքիւրենս տէր կ'ըլլամ, այն ժամանակ մտածութիւնները կը լեցուին մտքիս մէջ » :

Ոչ երբէք այս վսեմ երգահանը մտեցաւ դաշնակին քով ներշնչութեան ատենները. ստեղծած երգը մէկէն գրի վրայ կ'առնուր, որ արդէն գլխուն մէջ դրոշմուած կ'ըլլար :